

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 Ձր.
Վեցամսեայ 6 Ձր.

ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆ

Երկու քիւր մեկ ծրարով
Տարեկան 14 Ձր.
Վեցամսեայ 7 Ձր.

ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2 60 Տօր.
Վեցամսեայ 1.50 Տօր.
ԿԱՆԻՊԻԿ

ԽԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ
20 ՄԵԹ.



Լ Ր Ա Կ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Վ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏՆԵՐԱԿՈՒԹ ԿԱՄԵՆ ԶՈՒՆԵՐԱԿՈՒԹ Ի Ի ՇԱԲԱԹ

Հ Ա Ս Ը Լ

Redaction du Journal

«Iraounk»

(Bulgarie) VARNA

Ред.кция

на ВѢСТНИКЪ

«Иравунок»

ВАРНА

Գրութիւնք եւ չեմ
Իրոյիք

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՎԻՃԱԿԸ

—*—

Մայր երկրէն ստացուած լուրերը միութարական ըլլալէ շատ հեռու են, թէեւ խմբական կոտորածներ տեղի չեն ունենար. բայց արհեստական սովը և Հայերը արտագաղթի ստիպող ճնշիչ միջոցներու անխնայ փորձադրութիւնը մեզ սա սարսաղաբեցիկ երկիւղը կը ներշնչեն որ Հայ տարբը Հայաստանէն բնաջնջելու համեմատական ծրագիրը աւելի խորամանկօրէն կիրադործուի:

Եթէ օսմանեան կառավարութեան հայոցս հանդէպ բռնած ներկայ քաղաքականութիւնը 10—15 տարի ալ տեւէ, հետեւանքը սոսկալի պիտի ըլլայ. Մտածենք թէ բուն ծաղկահայաստանի մէջ բնակող Հայոց թիւը արդէն մէկ միլիոնէն պակաս է, իսկ այս թիւին էն արգասաբեր ծաղիկ մասը, մեծաւ մասամբ եւրիտասարդութիւնը երկրէն դուրս ցրուած է այսօր, և վերադարձի ամէն միջոցներէ զրկուած առայժմ Ամերիկայի, Կովկասի և ուրիշ օտար երկիրներու մէջ մօտաւորապէս 80,000 հայ երիտասարդներ ցիր ու ցան և տարտամ կեանք մը կ'ապրին, կեանք մը որ Հայաստանի ապագային ոչինչ չը խոստանար, իսկ անոր ներկային ամութիւնը կը վճռէ. Մայր երկրի մէջ անութութենէ, ցուրտէ, հիւանդութիւններէ ու քնական մահերէ պակասողներուն տեղ նոր սերունդ հասցնելու կորիզը կազմող երիտասարդութիւնը երկրէն կը բացակայի:

Թուրք կառավարութիւնը Հայուն համար իր ստեղծած այս գոթոյային վիճակին ուր հասնեալիքը շատ լաւ տեսնելով, գիւտային ժպիտով մը կը դիտէ մեզ, եւրոպան գիտակ այս բոլորին և ականատես կը լռէ իր անմիջական նիւթական շահերը չը վտանգելու մտահոգութեամբ. Հայկական ընդհանուր ջարդերէն ի վեր ահա 10—12 տարիներ անցանքաղաքակիրթ ազգերէ և ոչ մին չէ հաճած ցարդ կարեկցական

ակնարկ մը նետել ծաղկայատանի վրայ. մերթ լուռած պղատոնական ցաւակցութիւնները օճառի փրփուրի նման երեւալ ու ակնթարթի մը մէջ անհետանալու սահմանուած են:

Ահա թէ ինչ կը պատմէ մարտ 10 թուականու Բաղէշէն գրուած նամակ մը.

Այս տարվայ մեր կրած տանջանքն ու նեղութիւնը կը գերազանցէ քան զամեն տարվանք. Զեզ ծանօթ զանազան պարագաներից ստիպված, չեմ կարող ամեն ինչ պարզ գրել. ես քիչ կը գրեմ, դու շատ հասկացիր. Այլեւս մեզ համար ապրիլը՝ մահ է: Տասը տարուց աւելի մեզած թագաւորական վերկին (հարկը) այս տարի շատ խիստ կը պահանջեն մեզանից. Ժողովուրդը հացի փարա չունի, վերկին որ տեղից տայ, Ով չի տար իւր ժամանակին, զապթիները ու մուխթարը (հարկահանը) անոր տունը կը մտնեն եւ եզած չեղածը դուրս կը հանեն ածուրդի. Ուրիշ բաներ ալ չեմ գրել, դուք կ'իմանաք: Ամենատեղ ընտանիքներ զբաղ 8-10 իրա պարտք կը մնայ. Այդ էլ թողունք չը գիտենք ինչո՞ւ համար այս տարի մեր սուլթանը այնպէս իրատէ ըրած է որ Ռուսիա գնալու կամք ունեցողներ կարող են երթալ. Շատ շատերը թասքիբայի (անցագրի) կը սպասեն որ Ռուսիա անցնեն. Այստեղ մարդ չի մնայ, ապրելու ճար չը կայ. Բայց կարելի է մեռ գործերը ուրիշ տեսակ զանան (վերկին բառերը երեւի երկտասարդ թիւրքիայի նորագոյն շարժումներէ մասին կ'ակնարկեն): Սովը սարսափելի է այս տարի. Գաղաքը տարեց տարի յետ կերթայ առուտուր չը կայ. իւր չը կայ. Յորեն էլ չի ճարվի, շատ թանկ է. սովից մահացողները դեպքեր շատ են եղեր:

Մասնաւոր ուշադրութեան արժանի է նամակին սա տողը. «Զը գիտենք ինչո՞ւ համար այս տարի մեր Սուլթանը այնպէս իրատէ ըրած է որ Ռուսիա գնալու կամք ունեցողներ կարող են երթալ. Հոս յիշելու ենք թէ վերագարձի բնաւ արտօնութիւն չը կայ. իսկ ընդհակառակը իսլամներու համար, ըլլան ասոնք աւազակ եւ ոճրագործ, գռները բաց են գալ հաստատուելու Հայոց հոգեւուն վրայ:



ՎԱՂՈՒՄՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Արդէն պաշտօնապէս ծանուցուած է թէ վաղը Ազգ, վարժարանի սրահին մէջ տեղի պիտի ունենայ տեղույս Թաղ. Խորհրդոյ ընտրութիւնը. Բաղձալի է որ ամեն Վառնայաւանկ չափահաս ազգային երթայ իր քուէարկելու ադ. իրաւունքը գործադրելու:

Որոնք որ ընտրողաց ցանկին մէջ չեն արձանագրուած, պէտք է մինչեւ այս իրիկուն արձանագրուին եկեղեցւոյ տոմարին մէջ, որպէսզի վաղը քուէարկելու իրաւունքէն չը զրկուին:

Պուլկարիոյ մէջ, գեռ Առաջնորդական կազմակերպութիւն ու քաղաքական կրօնական և այլ ժողովներ չունենալնուս պատճառաւ, Թաղ. Խորհուրդը գրէթէ ամեն ինչ է: Անոր պաշտօնը միայն եկեղեցւոյ նիւթական մատակարարութեան մէջ չը կայանար կրթական, ընտանեկան, անհատական և յարաբերական բազմառեսակ խնդիրներ ու գործեր կը ներկայանան անոր առջև. այս պատճառաւ քուէարկող հայ ժողովուրդը լրջօրէն պէտք է խորհի իր ընտրելիներուն նկարագրին, զաղտնապահութեան և գործունէութեան մասին. չը տարուի կուսակցական նեղ հայեացքներով տողորուող մարդոց խօսքերէն ու պատրաստած քուէթուղթերէն:

Մենք կուսակցական նպատակներէ բոլորովին զերծ և միայն Վառնայի հայ գաղութին իրական շահերը նկատի առնելով, յարմարագոյն ընտրելի կը ներկայացնենք հետեւեալ եօթը անձնաւորութիւնները, որոնք ընտրողական ժողովոյ պատրաստած եռապատիկ ցանկին մէջ արդէն նշանակուած են:

- Տ. Խաչիկ Աղնաւորեան
- Նիկոլոյոս Բէստանեան
- Մինաս Առաքէլեան
- Յակոբ Թօսպըլըզեան
- Ասատուր Փափազեան
- Անդրանիկ Շիշմանեան
- Գրիգոր Յովհաննէսեան

Առաջին երեքը նախորդ Թաղ. Խորհրդոյ գործունեականներն են, որոնց երեք տարիէ աւելի արդիւնաւոր պաշտօնավարութենէ մը յետոյ հրաժարիլ միայն մէկ պատճառ ունեցած է. այն է ընկերներէն լքուած ու առանձին մնացած ըլլալնին. իսկ այս անգամ երբ իրենց կը տրուին գործող նոր ընկերներ, անոնք պատրաստ պիտի ըլլան ժողովուրդին քուէն յարգելով, շրջան մը եւս շարունակելու միեւնոյն պաշտօնը. Այս մասին մենք կը վստահացնենք ընտրողները:

Հ ՈՒՆ

ԴԵՊԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԱՅՐԸ

—*—

Ինչպէս անհատական, նոյնպէս տղազգերու եւ ժողովուրդեան կենսաշրջանին մէջ կը պատահին տրեւ եւ յանախ ժամեր, յորում սովորականէն տարբեր կերպով, բացառապէս լուրջ մտածելու ստիպողականութեան առաջ կ'զգանք զմեզ:

Եւ ահա, վաղուան թուականն ալ մին պիտի ըլլայ անտարակոյս՝ մասնաւորապէս Վառնայաւանկ հայ գաղութին համար, այն նշանակելի օրերէն, յորում 25 տարին լրացուցած անձնուր հայ անհատ, գիտակցութեան եւ պարտաճանաչութեան անխառն ոգին իրեն ուղեցող ունենալով, պիտի վութայ Ընտրող. Ժողովոյ նստագահ տէր հօր հրաւերին անձամբ եւ արդեամբ արձագանք հանդիսանալ. դիմելով հոն, ուր կը կոչէ՝ մեզ պարտականութիւնը. հոն, ազգ. առաջնորդարանը, ուր վաղը պիտի կատարուի Թաղ. Խորհրդոյ ընտրութիւնը:

Իրրեւ բոնութեան ասե՛ր հակառակորդներ, մենք երբէ՛ք, մեր վեհանձնութեան թոյլ չի պիտի տայինք, գիտակից ազգայնոց՝ ազատ կամաց եւ դատողութեան վրայ բռնաւարու ամենազոյզն փորձն անգամ ընել. Այլ, թողու ժողովուրդը, անսայթաք յառաջ ընթանալ, ինքնակամ կերպով, նոյն իսկ իւր ընտրած շաղէն:

Բայց եւ այնպէս, սիւս կողմանէ ալ չէինք կրնար բոլորովին անտարբեր հանդիսատես ըլլալ. հանդէպ ժողովրդեան այն մեծ հատուկին՝ մասնաւորներու կողմանէ ի գործ դրուած անխիղճ շահագործումին միջոց յօգուտ իւրեանց եւ ի վնաս ազգին:

Այո՛, չէինք կրնար հանդիսութել, որ ժողովրդեան գոհիկ զաւր, կարգ մը

թաղան նպատակաւ սքողեալ բաղդա-
խնդիրներու ծաղրու ծանտկին անարգ
առարկայն հանդիսանար, լուել համա-
նման պարագայից մեղ, դա կը նշանա-
կէ ինքնահեղուս :

Խմբագրի մը, սեպուհ պարտականու-
թիւնն է, մանաւանդ ներկայ պարա-
գայից մէջ, ժողովրդեան ուղղեցոյցն
հանդիսանալ, զգուշացնելով զայն շո-
ղոթորթներու ծուղակն ինչաւ ահ-
ներեւ վտանգէն :

Իստիկ ժողովուրդը, ո՛րքան ալ
հանդէպ ազգային շահերու, բարեացա-
կամ տրամադրութիւններով տոգորուած
ըլլայ, բայց եւ այնպէս, նա միշտ են-
մակայ է շլանալու ա՛յն ոսկեղէն դե-
զահատներէ, զորս իրենց հրաժեշտողնե-
րու քանակը, մանաւանդ վերջերս ահե-
ղինաներու կը հաւենի :

Կուսակցական ամեն ճղճիմ նկա-
տումներ առաքելու քրած. «Իրաւունք»ի
ներկայ սինակներուն մէջ, մէկէ աւել-
լի անգամներ, մեզ առիթ ներկայացած
է, մեր տկար գրչին ապաւինած ի
հանդէս գալ, եւ անտեսուած ժողո-
վրդեան բռնաբարուած իրաւունքին՝
թեր ու պաշտպանն հանդիսանալ :

Եւ միշտ հաւատարիմ մեր կոչման,
իւր պարտքը անթերի կատարողին զգա-
ցած անհուն բերկրանքով արելու,
անմեղ հպարտութեամբ կուզանք խոս-
տովանիլ, թէ մեր գերագոյն ճիշդ ե-
ղած է միշտ ազդին շահերը անվթար
պահպանել, եւ այժմ ալ, մեր ջանքը
պիտի ըլլայ ազգը օժտել արժանի թա-
ղականութեամբ, որ լինի գիտակից
իւր կոչման բարձրութեան, եւ պատաս-
խանատու պաշտօնին վեհութեան :

Սոյն քաղցր յոյսով տոգորուած, կը
սիրենք տեսնել հայ անհատը, պար-
տաճանալութեան որոշ աստիճանին հա-
սած եւ իւր վերերեւոյթը հոն, Ազգ-
Առաջնորդարան, քուէաթուղթն ի ձե
ոքն իր ձայնը տալ արժանաւորագոյ-
նին :

Վերջին անգամ ըլլալով կը կրկնենք,
ուրեմն, դիմենք հո՛ն, պարտականու-
թեան վայրը :

Վառնա

ՓԱՅԼԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԻՌԱՆԻՆԻՆԻ ԽՆԴԻՐԸ

Անգլիոյ կառավարութեան և
Իռլանտացւոց միջև երկար տա-
րիներէ իվեր յուզուող խնդիրը

Ա. ԵՐՏԱՆԵԱՆ

77

ԱՌԱՋԱԿԱՊԵՏԸ

— — —

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ԿԱՌԱՂԱՆԸ

(Շար. նախորդ թիւէն)

— Եւ դու ք պատասխանատուութեան
ներքեւ չը մնալու ու կառավարու-
թեան օրինաց հանդէպ յանցաւոր մը
չը նկատուելու համար հարկադրուե-
ցա՞ք՝ Ս. Պատրիարքն եկած հրամա-
նն համաձայն, այն քահանան ան-
այսման կերպով վանքը մեկուսացնե-
ու, այնպէս չէ՞, դիտել տուաւ Աւա-
զակապետը հեղինական բայց դառնու-

այս միջոցիս ծանր կերպարանք
ստացած է։ Իռլանտացիք կատար-
եալ ինքնավարութիւն կը պա-
հանջեն. անգլիական կառավա-
րութիւնը մասամբ գոհացում
տալու նպատակաւ ծրագիր մը
մշակած էր վերջերս, ինչ որ
գոհացում չէր միայն առաջ բե-
րաւ Իռլանտացւոց մէջ։ Ահա թէ
ինչ կը կարգանք եւրոպական
չէզոք թերթի մը մէջ։

Օւն-Ուոլի խնդիրը— Անգլիոյ ազա-
տական դաշինքը մեծ անկում մը կրեց,
իւր մշակած ծրագիրը Լորտերու ժողո-
վին մէջ արգէն մերժուած է։ Դաշինքը
այս պատճառաւ ուզած էր պատճել
այդ բարձրագոյն խորհրդարանը զայն
վերակազմելով, բայց վերակազմութեան
իւր այդ ծրագիրը չը յաջողեցաւ
մարմին ստանալ։

Նոյնպէս Ուոլի ծրագիր մըն ալ մը-
շակած էր Իռլանտական խնդիրը լու-
ծելու նպատակաւ։ Եւ Իռլանտացիք ո-
րոշեցին թէ իրենք չեն ուզեր այդ մա-
սին ոչինչ գիտնալ։

Իռլանտացի համար մշակուած այդ
ծրագիրը կատարեալ ինքնավարու-
թիւն չը տար Իռլանտացւոց, ոչ ալ
ազատ խորհրդարան, այլ մէկ «Վարչա-
կան խորհուրդ» 107 անդամներէ բաղ-
կացեալ, որոնց 82ը պիտի ընտրուին
ժողովուրդէն, 24ը թագաւորէն պիտի
անուանուին եւ մէկը պետական քա-
տուղար։

Այդ խորհուրդը պիտի նայէր եւ ո-
րոշէր այն ամեն խնդիրները որոնք կը
վերաբերին տեղական վարչութեան,
գիտակցան եւ երկրագործական ճիւղե-
րու, հանրային շինութեանց ու դաս-
տիարակութեան, բայց չը պիտի պա-
րագէր ոչ ոստիկանական գործերով եւ
ոչ ալ հողերու բաժանման խնդրով։
Փոխարքան իրաւուրք պիտի ունենար
խորհուրդին որոշումները չընդունելու։
Անգլիոյ երեսփոխանական ժողովը վե-
րաքննիչի դեր պիտի ունենար փոխա-
քայի վիթրոյի մասին։

Այս ծրագիրը խմբագրող Մ. Պիտէյ
ը կըսէր Իռլանտացւոց «բոլորովին
ձեռք առնող» չէ ասիկա, այլ զէպի
հոն սպանող ճամբան է այս»։ Բառը
մանի մէջ Իռլանտացի իւր մըր այս
տեսակետով համակերպած սկսած էր
իւր հաւանութիւնը տալ։

Բայց Իռլանտացի ժողովուրդը, ծայ-
րայնութիւնէ գրգռուած ընդհանուր շար-
ժում մը սկսաւ կառավարութեան այդ
ծրագրին դէմ։ Ամերիկայի Իռլանտա-

ցիները՝ որոնք էն մոլեռանդ հակառա-
կորդները են Անգլիոյ, դրամ զրկեցին
այդ շարժումը զօրացնելու հանար։

Եւ կաթոլիկ քահանաները իրենց
բոլոր ճիշդ թափեցին ծրագիրը ջուրը
ձգել տալու նպատակաւ։

Տուպլինի մէջ մեծ միջին մը տեղի
ունեցաւ ուր միաձայնութեամբ որոշ-
ուեցաւ կառավարութեան առաջարկ-
ները մերժել։ Մ. Ռէտման, ինքն ալ,
որ Իռլանտացի երեսփոխան մըն է եւ
որ Բառլամենին մէջ հաւանած էր, ժո-
ղովրդական հոսանքին ենթարկուեցաւ։

Կառավարութեան այլեւս ուրիշ բան
մնացած չէ, բայց եթէ ետ առնել իր
այդ ծրագիրը։

ՎԵՐ. ՆԵՂ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԾՈՒՐՁԸ

(Շար. նախորդ թիւէն)

Վարդապետը կը տեսնէ իւր ընկեր-
ներու որոշումը եւ կը կատարէ, կըսէ թէ
դուք ո՞վ էք որ կը համարձակիք իմ
զէմ առանկ որոշումներ ընել։ Մեր
Նահանգ. Վարչութեան երեք անդամ-
ները հոս քաջութիւն կուենան վար-
դապետին դէմ կուռելու։ Թէ մենք
քեզ գանձապետ ըրինք դուռ մեր վրս-
տահութիւնը շարաշար գործածած, ծախ-
սած եւ գանձին դրամը ու կուգես ծախ-
սել միայն քու սիրած անձին համար,
վաղը ի՞նչ հաշիւ պիտի տաք պատ-
գամաւորական ժողովին։

Այս կերպով կը յաջողին կուսակ-
ցութեան գանձը վարդապետին ձեռ-
քէն առնել, վարդապետը դեռ իր հրէ-
շաւոր ծրագիրը անյաջողութեան մէջ
տեսնելով կը հրաժարի։ Բանի մը օր
վերջը սպանական նամակ մը կը գրէ
Նահանգ. Վարչութեան թէ դուք պէտք
է որ առնուազն ամիսը 200 տուար
տաք պր. Արզուեանին, եթէ ոչ ես ալ
իմ միջոցիս կը գիմեմ Նահանգ. Վար-
չութիւնը այս սպանական նամակը
առնելէն առաջ արգէն 25 տուար շա-
րավական որոշած էր Արզուեանին հա-
մար. երբ սպանական նամակը կըս-
տանան, անմիջապէս կերթան կեդր-
վարչութեան Ամերիկայի ներկայացու-
ցիչ Տօք. Ա. Տէր Մարկոսեանի Տօք.
Մարկոսեան կը կանչէ վարդապետը
Վ. Շահրիմանի հետ կը պատուիրեն որ
վարդապետը Նահանգ. Վարչութեան
ստակ չուզէ Արզուեանի համար Տօք.

Մարկոսեան կըսէ թէ Արզուեանը թող
գայ եւ ինձմէ ուղէ. այսպէս խնդիրը
կը կարգադրեն Նահանգ. Վարչութեան
երեք անդամներուն հետ։ Վ. Շահրի-
մանը ետ կերթայ իր տեղը. իսկ Նա-
հանգ. Վարչութեան երեք անդամները
կը սկսին մասնաճիւղեր այցելել. դեռ
անոնք մասնաճիւղեր կայցելէին յան-
կարծ Տօքթ. Մարկոսեանէ չըջարեա-
կան մը կըստանանք թէ «Իբր կեդր-
վարչութեան անդամ լուծեցի Նահանգ.
Վարչութիւնը»։

Այս տարորջնակ խաղը մեր բոլոր
անկեղծ ընկերներուն սիրտը թռնդ
հանեց. Տօք. Տէր Մարկոսեան իբր կեդ-
րոնի անդամ ինչո՞ւ չի լուծեց ան ժա-
մանակ երբ Նահանգ. Վարչութեան մէջ
անհամաձայնութիւն կար. Տօքթօրը
շատ արդէ կ'ըսէր թէ վարդապետը ինչ
դեր խաղացած է, անիկա շատ աղէկ
գիտէր թէ ինչպէս վարդապետը տիրա-
ցեր էր Նահանգ. Վարչութեան գան-
ձին, թէ ինչպէս ծախսեր է կ'առ թէ
ինչպէս զեղծուծ գործած է։ Ինչո՞ւ չի
լուծեց այն ժամանակ եւ թոյլ տուաւ
որ վարդապետը զազրելի դերը խաղայ։
Լուծեց ան ժամանակ երբ վարդապե-
տին ձեռքէն կուսակցութեան գանձը
ազատուած էր ու Նահանգ. Վարչու-
թեան երեք անդամները համաձայն կը
գործէին։ Գաղտնիքը շատ պարզ տե-
սանք միջալարիկ Պատգամ. ժողովին
մէջ։ Նահանգ. Վարչութիւնը Արզու-
եանի շարաժական պիտե՞ն կտրած
25 տուարի վերածած էր. Արզուեան
25 տուարով չէր գոհանար, ուրիշ ճար
չկար, պէտք էր վարդապետին հետ
Նահանգ. Վարչութիւնը լուծել տային.
հայ յեղափոխութեան դրամները Ամե-
րիկայի մէջ. . . ներու հետ ուտէին։

Ուստի պէտք էր Տօք. Տէր Մար-
կոսեանի միջոցաւ լուծել տալ Նահան.
Վարչութիւնը։ Ու իրենց նպատակին
հասան, եւ լուծել տուին։ Տօքթօրը
եթէ քիչ մը քաջութիւն եւ յեղափո-
խական կորով ունենար այսօր մեր
կուսակցութեան մէջ իր փառաւոր
գիրքին վրայ էր, բայց նա Արզուեանի
ու վարդապետի ազդեցութեան տակ
անցուց եւ անոնց կամքին ծառայե-
ցուց կուսակցութիւնը. իւր սիրտը փը-
կելու համար լուծեց Նահանգ. Վար-
չութիւնը։

Նա գիտէր թէ երբ խնդիրը մասնա-
ճիւղեր հասկնան շատ գէշ կերպա-
րանք պիտի առնէ. բայց խեղճ մարդը
գործիք եղաւ Արզուեանին ու վարդա-
պետին։

Լուծուած Նահանգ. Վարչութեան
անդամները դեռ իրենց այցելութեան

կերեւար եւ հազիւ կրնար արցունքը
զսպել։

— Տէր Օհան, այս բարեկամը Պարս-
կաստանցի հայ վաճառական մըն է,
ընդհատեց վանահարին այն խոր լուռ-
թիւնն որ տիրած էր անոնց մէջ։ Փա-
փաք յայտնեց ձեզ տեսնելու։

— Աստուած իրեն երկար կեանք
տայ, միմիջեց տէր Օհան։

— Դու ք պարսկաստանի մէջ մտերիմ
անձ մը ու՞րք, տէր հայր, չեղեց Ա-
ւազակապետը։ Այդ մտերիմը ինչ խնդ-
րեց որ յատկապէս ձեզ տեսնէի։ Եւ
բոտ այնմ տեղեկութիւն մը հաղորդէի
իրեն. եւ որովհետեւ ձեռք գեղին անու-
ր. . . տուած էր ինձի, քաղաքը գալուս
պէս առաջին գործս եղաւ հարցունել
ձեռք վրձակր. Գիւղացիներդ ըսին որ
վանքը մեկուսանալու հրաման եկած է
ձեզի կ. Պոլսոյ Պատրիարքարանէն ու
դու ք հոս կը գտնուիք։

— Ծնորհակալ եմ. . . գողդաց տէր
Օհան ու փայլակի արագութեամբ մըտ-

քէն անցուց թէ՛ Ներսէս Արծրունին
ըլլայ. . . Կարելի՞ է իմանալ անոր ա-
նունը։

— Այս հարցումին վրայ, Աւազակա-
պետը թղթապանակէն փոքրիկ պահա-
րան մը հանեց ու ըսաւ։

— Ահա այդ երկտողին մէջ կարող
էք իմանալ անոր ո՞վ ըլլալը։

Տէր Օհան բացաւ պահարանն ու
կարդաց հետեւեալը։

«Անձնուէր ընկերդ՝ Ներսէս Արծ-
րունի՝ կը հարբուրէ ձեր սուրբ աջը»

— Յիշեցի՞ք, տէր հայր, կրկնեց Ա-
ւազակապետը։

— Ո՛հ, այո՛ւ յիշեցի. . . Թոժովեց
տէր Օհան Արդեօք ի՞նչ կընէ. . . ի՞նչ-
պէս է իր վրձակը։

— Աստուած գիտէ. . . առաջուան
գիտցածիդ պէս։ Եստ անգամ տունս
կուգար, կը խնդրէի որ մնար. . . բայց
չէի կրնար համոզել։ Ծարաթներով
անյայտ կըլլար ու նորէն կը վերա-
դառնար. . .

